

1005

1889

~~200-5~~

U-79

010


206.5

ur. N 270 yed

U-79

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆՈՐ ՎԱՆԱՑ Ս. ԳԵՈՐԳԵՑ ՈՐ ԻՄՈՒԳՆԻ



ԳՈՐԾ



ՄՅՈՓԸՆՆՈՑ ԵՊԻՏՈՊՈՍԻ ՄԻՍԻԹԱՐԵԱՆ

ՇՒՐԱԿԱՑՑԻՈՅ

ՍՈՍՈՍԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՏՆԻ



ԴԱՎՐԵԺ

Ն 306 m

ՅԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ


1889

33207-4.2.

20 01

85-71891

1010 / 40720



Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԱՀԱՐԱՉԱՆԻ

ՍԻՐԱԿՑՈՐԴ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ԿԱՐԱՊԵՏԻ ԵՒ ՀՈՒՓՍԻՍՐԻՒ

ՈՐԲ

ԿԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԸՆԴ ՀՅՎԱՆԵԱԻ ՍՐԲՈՑ ՑԱՃԱՐԻ
ՎԱՆԱՅՍ

ՆՈՒՒՐԷ ԱՆՀՈՒՆ ՍԻՐՈՎ,

ՈՐԴԻ ՆՈՑԻՆ ՀԱՐԱՋԱՏ

ՍՅԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՒԹԵՐԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ


Երբ բարեպաշտ բրիտանաց ժողովուրդը հայոց, հեռա-
ւոր և մերձաւոր աշխարհներէ և տեղերէ կ'յաճախեն յուխտ
և յերկրպագութիւն հռչակաւոր վանացս սրբոյն Գէորգոս
Զօրավարի :

Երբ օտարազգի այցելուք կ'հանդիպին անդանօր , կար-
ծես թէ՛ առ հասարակ ամենից համար կ'ըլարթնի ընտկան՝
բայց գեղեցիկ հետաքրքրութիւն մի , լսել և ունենալ
անշուշտ այդ սուրբ Կոթողի , այդ նուիրական Տաճարի
համար լիուլի ստուգապատում տեղեկութիւններ : Ուստի
իւրեանց այդպիսի բուռն հետաքրքրութիւնքն յցուցանելու
և գոհ անելու բարի ցանկութեամբ , հարցախնդրով կը-
դիմեն այս և այն անձանց կամ յատկապէս գտնուած վա-
նականաց . Բայց բազմիցս՝ դժբաղդաբար , պատահելէ ինչ
ականատես և ականջալուր լինել , որ շատերն յայդ գէ-
պըս՝ գուցէ և յանգիտութենէ , ճշմարտութիւնն՝ ազգա-
սիրութեան կեղծ վզացմանց կ'զոհեն և իւրեանց թիւր
և սխալ ենթադրութիւնքն՝ կընան քան պատմական
ստոյգ աւանդութիւնն և նոյն իսկ պատմութիւնն գերա-
դասել , և որպէս զի բարեպաշտ սրտեր անահաւատու-
թեամբ դիւրեաւ դիւթել և պարզամտներն նախապաշա-
րել , կսկսին ըստ բնաց և ըստ հաճոյից՝ անյիշատակ ժա-
մանակներէ անլուր անցից , հրաշից և սքանչելեաց տյն-
պիսի առասպելաբանութիւնք անել , որ այնուհետեւ երբ
բանագէտ ոք յամէն միոյն զրոյցն և պատմութիւնն կանու-
ի կըռադատութիւն՝ կտեսնէ , որ միշտ միմեանց հակառակ
շաւօք կընթանան : Ուստի մեր բարեպաշտ ազգայինք-
ներն և օտարազգի այցելուներն այդպիսի գայթազողու-
թենէ ընդ միշտ ազատ և զերծ պահելու բարի նպատակաւ՝

ձեռք վարկի այս փոքրիկ աշխատութեանս, որպէսզի հետաքրքիր անձանց այսու բաւականութիւն տուած լինիմ, (Կլոպեւ և Բաղն ընկ պարս սրեալ աշխատութիւն հարստ պարսնութիւն յիշեալ աշխարհի, նաև ս յնճան որ յնոր յն պարստութիւն յարի տես ին ին Բեժահուլ է վանքերից համար, Տաթևու, Սորվիբուայ և Ղեղարդայ, ըն և որպէր առ ի) Վասնորոյ կամելով ծանօթացնել մեր բանասէր և հետաքրքիր ընթերցողաց՝ որբան կարելի է՝ յենուելով պատմական հաւաստի և հաւատարիմ տեղեկութեանց վերայ, կարևոր համարեցի գնել ի գլուխ գրուածոցս նախ՝ թէ ո՞վ որ էր Սուրբն Գէորգ և հայրենեօք ո՞ր աշխարհէ և նորա հրաշալի նահատակութեան անցից պատմութիւնն։ Երկրորդ՝ ո՞ւստի և ե՞րբ է քերած նշխարհ սրբոյն ի հայաստան աշխարհ Արարատեան, նախապէս ո՞ր վանաց մէջ ամփոփուած, ո՞ր ժամանակի և ի՞նչ հարկեցուցիչ պատճառաւ շինեցաւ ներկայ հրաշափառ Տաճարս յանուն սրբոյն Գէորգայ Զօրավարի։

Երրորդ՝ տեղագրութիւն վանացս։ Զորորդ՝ շարք վանահարց, կեանք և գործք նոցա. սկսեալ յօրէ հիմնարկութեան ցնեակայ ժամանակս։ Կինգերորդ՝ սեփհակա՞նութիւնք և կալուածք վանացս։

Ս. Ե. Մ.



ԹՈՒՐԲՆ ԳԷՈՐԴ ՀԱՆԻԷՂ ԴԻՈԿԼԻՏԻՆՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳԷՈՐԴԵՑ ԶՕՐԱԿԱՆԻ

Քաջամարտիկ մեծ նահատակ և յաղթող զօրականն Քրիստոսի սուրբն Գեորգ էր հայրենեօք Պամրաց աշխարհէն Վասպարով կիոյ, որ այժմ կեսարիա կկոչեն, աղատազնեայ և բարեպաշտ առաքինի ծնողաց զաւակ, հասակաւ վայելուչ, գեղեցկադեմ և իմաստուն: Յաւուրս Ղիովղետիանոսի կայսեր Հրուովնայեցւոց ունէր կոմսութեան իշխանութիւն արևելեան սկանաւոր գնդին Մնեկեան կամ Մնեկիսոն այսինքն անյաղթից: Որովհետեւ ամբարիշտն Ղիովղետիանոս էր կրօնիւք կռապաշտ և միանգամայն հակառակ նորասարած քրիստոնէական հաւատոյն, ուստի մահուչափ ատելի էին նմա, ուք կկրէին իւրեանց վերայ քրիստոնեայ անունն: Վասնորոյ ի խորհուրդ նենդութեան և անօրէնութեան կոչելով նա և իւրեան թագաւորութեան երկրորդն Մագնենաիոսն վճռեցին, սրռեցին և կարգադրեցին կամ այնէ բռնադատել բոլոր քրիստոնէաներն երկրպագութիւն և պաշտօն մատուցանել կոռց և պատկերաց և զոհել զոհեր առաուծոյն Մարտիոնի և եթէ անրուր և անհնազանդ կգտնուին մեր կայսերական հրամանին, իսպառ բառնալ աշխարհէս զոցա կեանքն և բոլորովին ջնջել և անհետ առնել քրիստոնէութեան անունն: Իայց նախապէս յանուանէ Ղիովղետիանոսի չարաննդ կայսեր զրեցաւ այսպիսի մի անօրէն հրովարտալ

« Վիտիզեփանոս միշտ պատուեալ սեւասոոս, յաւետենական ինքնակալ, առ ամենայն իշխանութիւնս և աշխարհս Զոռմայեցոց՝ զօրավարաց, դատաւորաց, իշխանաց և ամենայն պետաց իշխանութեանց, որք մեր ձեռաց ներքոյ էք, ինդալ Զամբաւ հասաւ մեր աստուածեղէն լսելեաց և մեզ շատ խռովեցրեց, որ քրիստոնէից ամբարշտութեան հերձուածն սկսել է զօրանալ, թէ Մարիամ անունով մի հրէայ կին ծնելէ Յիսուս, զոր իբրև աստուած կպաշտեն, իսկ մեր յաղթական աստուածներն՝ մեծն Ապօղօն, Արմիս, Վիտիսոս, Արակլէս և Վիւս, որոց ձեռօքն կպարգևի աշխարհիս խաղաղութիւն, կհայհոյեն, կթշնամանեն և կանարգեն, իսկ այն՝ որ քրիստոս կկոչեն, կպաշտեն իբրև աստուած. մինչդեռ հրէայք նորան իբրև մահապարտ և մոգ խաչեցին: Ասանորոյ հրաման կամ, ուր և կգտնէք թէ քաղաքաց և թէ դաւառաց մէջ քրիստոնեաներ թէ այր և թէ կին դառն տանջանաց մէջ կձգէք այնքան, մինչև նոքա զոհեն մեր աստուծոցն և ուրանան իւրեանց այդ մոլորութիւնն: Իսկ որք կհաւանին, թողութեան արժանացնել, ապա թէ ոչ դժնդակ մահու, սրոյ և հրոյ մասնել նոցա, որպէսզի զիտենան նոքա թէ անփով խելի են մեր հրամաններն իսկ ո՞վ ոք հեղձութեամբ կատարէ մեր այս աստուածեղէն հրամանն, նոցա նման վճիռ կընդունէ: »

Արբ այսպիսի տնօրէն հրամանն չարագործին Վի-

ոկղեփանոսի հասաւ իւր իշխանութեան ամենայն տեղերն, մեծ և անտանելի հալածանք յարուցին վայրենաբարոյ պաշտոնեաներն զիւաց և կոոց ընդդէմ քրիստոնէից. բայց քրիստոսի հաւատացեալ զինուորաց թիւն օր քան զօր կաճէր և կբազմանայր ամենայն տեղ. հաստատուն հաւատով և յուսով ամրապնդելով զինքեանս թէ լաւ է ուրախութեամբ ընդրել մահ քան ուրացութիւնն քրիստոնէութեան և կամ հնդանդիլ անօրէն աստուածուրաց թագաւորին: Արբ քան զամենայն հաւատացեալներն յառաջագէմ և առաւել համբաւաւոր հաղիսացաւ քաջ զօրապետն սուրբն Վեդրդ իւր քրիստոնէական հաւատոյ ջերմեռանդութեամբն և հանապազօրեաց կենդանի քարոզութիւններով՝ որից կարի յոյժ զայրան լով Վիտիզեփանոսի՝ յասկապէս ժողով կազմելով ի Վիտիփտիա քաղաքի, ուր կոչեցան ամենայն ծերակոյտ աւազանիք, զօրավարք և զօրապետք, որպէս զի զիւական խորհրդով ազգի ազգի տանջանօք ջնջել խապառ յաշխարհէ քրիստոնեաներն: Առջեցին և յայն խժոժական, աստուածուրաց ժողովոյ ատեհանն նաև սուրբն Վեդրդ, ուր մտաւ նա ազատ և համարձակ, և երբ Վիտիզեփանոս շողմարար և ողորական կեղծ խօսքերով կյորդորէր նորան ուրանալ զքրիստոս և զոհել կոոցն, նա՝ անվեհեր արիութեամբ յանդիմանելով և անարդելով կռապաշտութեան մոլորութիւնն՝ յատենի անդ կդաւանէր ըզքրիստոս թէ նա է ճշմարիտ աստուած արարիչ երկ-

նի և երկրի, որում ծառայելուեմ մինչև ցմահս և խորհուրդ կամ քեզ՝ աէր արքայ, մինչ զիս ի խաւարային մոլորութիւն կռապաշտութեան կհրապուրես, բարւոք է քեզ դառնալ այդ խաւարազնաց ճանապարհէն կռապաշտութեան դէպի լոյսն ճշմարիտ աստուածապաշտութեան և թագաւորիչ աշխարհիս վերայ քրիստոնէայ թագաւորի բարի անուամբ:

Մինչ դեռ սուրբն Պէորդ խօսքն ի բերան կշարունակէր իւր իմաստուն յորդորներն՝ այնտեղ կանդնած զօրականաց մին՝ յակնարկելն Պիոկղեախանոսի՝ խկոյն գեղարդեամբ պատառելով փորն սրբոյն թափեց արիւնն, բայց աստուածային շնորհիւ մնաց կենդանի, ապա տարան ի բանդ և ամրապինդ պրկեցին սեան վերայ, ուր և հրաշիւք ողջացան կողահերձ վէրքերն: Քանի օրեր տանջանարանաց բանտի մէջ պահելէն զկնի, դարձեալ տարան զսուրբն յատեան դադաստանի, ուրանօր ուրացութեան նորանոր հարց և փորձի ենթարկելով: Բայց երբ տեսին նորա անզրդուելի և հաստատուն հաւատն առ քրիստոս աստուածն մեր, և յայանի արհամարհել և անարգել կռքերն, ապա թագաւորն ևս առաւել ի բարկութիւն բորբոքելով՝ կհրամայէ մերկանդամ կապել ըզսուրբն մի անուոյ վերայ, որ շինուածէք զրիթէ դիււական մտածողութեամբ և շրջապատած երկաթի սուր սլաքներով, որքան և դահիճք տանջանարանաց պաշտօնեաներն կհոլովէին անիւն զառ ի վեր և զառ ի վայր, այնքան և սուր սլաքներ խստիւ պատա-

ռելով մարմինն սրբոյն և բազմաթիւ ծակոտիք բանարով անտի կցասկէր և կցողէր յերկիր նորա սուրբ արիւնն իբրև առատահոս անձրև. բայց զօրութեամբ ամենակարողն աստուծոյ, այդչափ դառն և անհնարին տանջանաց տոկարով՝ թերևս կմնայր կենդանի և ստացեալ վէրքերն հեղ հետէ կառողջանային:

Որպիսի գերբնական աստուածային հրաշքն տեսնելով անհաւատից՝ շատերն կդառնային կռապաշտութենէ և կդաւանէին սրբոյն Պէորդայ պաշտած և քարոզած աստուածն Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Իսկ սուրբն Պէորդ թէ ի բանդին և թէ արտաքոյ, ամենեկն չէր դադարիլ քարոզել անհաւատներին Յիսուսի Քրիստոսի մարդեղութիւնն և աստուածութիւնն և որք կհաւատային իսկոյն զորովն զստուածային ս. նշանաւն կխառնէր զնրսա ի դռնդրս զինուորեալ եկեղեցւոյն Քրիստոսի: Այդ հաւատացեալ իմբին մէջ առաւել նշանաւոր էր նա ինքն բարեպաշտուհի թագուհին Աղէքսանդրէ (կն. Պիոկղեախանոսի) որոյ դարձի և հաւատալոյն վերայ Պիոկղեախանոս չափազանց զայրանալով՝ հրամայեց վերստին հարց և փորձի ենթարկել զսուրբն Պէորդ, եթէ նա դարձեալ յամառ կմնայ իւր քրիստոնէական հաւատոյ վերայ, այնուհետև մատնել առաւել խստագոյն տանջանաց, որ և եղև այնպէս: Այր տեսին թէ սուրբն Պէորդ ոչ միայն անդարձ է իւր դաւանած կրօնէն այլ և անդադար անարգելով կանարդէ իւրեանց մոլար կռապաշտութիւնն, իսկոյն տարան և զրին

կրահրոյ միջ երեք օր, ապա այն տեղէն հաներով աչ գուցին բաներն սուր սլաքներով շինած երկաթի կոշիկներ և այնպէս արիւնահոս ոտներով անարգանօք կը ջեցնէին քաղաքի փողոցներն և հրապարակներն, իսկ նա արիաբար տանելով այդ ամենայն չարաչար կտտանաց և դառն տանջանաց, սաղմոս ի բերան գոհուեամբ կփառաւորէր զաստուածն կենդանի:

Այս կհրամայէ Ղիովիտիանոս իւր ղինուորաց թէ տարէք սուրբն Պէորդ ի կռատուն աստուածոց մերոց և բռնի պաշտել տուէք զորան մեր աստուածներն, որովհետև դա իւր մոլար քարոզութեամբն մարտիցոյց մեր երկու քաջ զօրղուէններն իւրեանց զօրօք հանդերձ, նաև մեր ամենասիրելի թագուհին Աղէք անդրէ և դարձոյց զնոսա ի կրօնս քրիստոնէութեան: Այր կտանէին սուրբն Պէորդ ի տաճարն Ապօղօնի, խուռն բազմութիւն մոլիաշունչ աղաղակաւ և ցնծութեան ձայներով զրոհ տուած կրնթանային նորա հետ, թերևս համարուած լինելով թէ անշուշտ սուրբն Պէորդ զոհելուէ և երկրպագելու կոտցն, ընդհակառակն նա՝ այնտեղ ևս անարգեց և խորատկեց Ռազինն Ապօղօնի, զոր ըսելով և կարի յոյժ սրամտելով Ղիովիտիանոսի՝ իսկոյն և եթ թէ սրբոյն Պէորդայ և թէ Աղէքսանդրէ թագուհւոյն զլխատման համար այսպիսի վճիռ հաստատեց:

« Պէորդայ խորհրդակցի դալելիացւոյ, մեր ինքնակալութեան հրամանն արհամարհելոյն համար, որ չե՛րկրպագեց Ապօղօնի, նա և թագուհին իւր հետ

մարտիցնելով՝ հայհոյեց աստուածներն, ուստի կտամ այս վճիռ, կհրամայեմ կարել նորա զըւէն և նորա հետ Աղէքսանդրէի, որ նորանից մարտուել կը: »

Պատրաստական ղինուորներն իսկոյն և եթ տարան զնոսա ղլիհատման տեղն արտաքոյ քաղաքին, որոց հետ նաև շատ քրիստոնէայ հաւատացեալներ և նահատակեցին պէսպէս տանջանօք և մահուամբ: Իսկ բարեպաշտուհի թագուհին նախ քան ղլիհատելն արդէն առ աստուած աւանդելէր իւր հաւատացեալ հոգին: Ռայց մարմինն սրբոյն Պէորդայ՝ իւր Պատիկրատու հաւատարիմ ծառայն՝ ինչպէս պատուէր ընդունած էր իւր տիրոջէն, որ միշտ ներկայ էր նորա նահատակութեան հանդիսին, ասրաւ պաղեստինու երկիրն՝ Ղիոսպօլիս քաղաքն, այն է Ղիւզիա կամ ըսա այլոց ծովեղերիայ քաղաքն Ումէլ, ուր կայ վանք հայոց յանուն սրբոյն Պէորդայ: Ահա այսպիսի հրաշագործութեամբ է եղել նահատակութիւն և մահ սրբոյն Պէորդոյ յամի տեառն 303. Ապրիլի 23 ահեկանի 16. ի փառս հանուրց ստեղծողին տիեզերաց: Այլ Քրիստոս Աստուած աղօթիւք և բարեխօսութեամբ քաջ նահատակին իւրոյ որբոյն Պէորդայ զօրավարի փրկեսցէ ամեայն հաւատացեալներն պէսպէս ցաւերից և փորձութիւներից, բժշկեսցէ ամենայն ախտաժտութիւն և հիւանդութիւն և ի բարին կատարեսցէ նորա հայցուածներն և աղաչանքներն. ամէն:

ԵՐԲ Է ԲԵՐԱԾ ԵՂԻԱՐԲ ՍՐԲՈՅՆ ԳՔՈՐԴԱՅ
Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ ԱՐԱՐԱՏԵԱՆ.

Իբրև ժամանակակից ականատես անձի դործ ունելով ինձ ձեռնարկ հաւատարիմ պատմագրութիւնն Օւրբարիա Սարկաւաղի Յօհաննու վանից Վարբոյ, որից կքաղեմ սոյն ստուգապատում անդեկութիւնն, որ է այսպէս (հարսդ Գ. Գլ-ի ԺԿ և ԺԷ) երբ նա հաստակեցաւ սուրբն Վեորդ ի Վամիրս, այնտեղ կպահուէր նորա մարմինն մինչև ցաւուրս սրբոյն մեծին Ներսէսի հայոց հայրապետի: Սա՛ բերել տալով մարմինն զրեց Յօհաննու վանաց մէջ. ուր ժողովեցան բազմաթիւ ուրուկներ, գօթիներ և բորտաներ և կինամարկուէին անդ մինչ զեռ չէր նուաստացած իշխանութիւնն հայոց: Իսկ երբ հայոց իշխանութիւնն անկաւ մասամբ այլազգեաց ձեռքն, իսկ երկիրն շիրակայ և դաւառն կարբոյ կային ընդ իշխանութեամբ վրաց ախրապետողն Վաթո անուն թագաւորի, սորա Բէժօն անուն միակ որդին բռնուելով անբժշկելի ցաւօք գօթութեան և չգանելով երկրացի բժիշկներէն օգնութիւն, ապա ըստ պատմելոյ ոմանց առաջի թագաւորին թէ քոյ իշխանութեան ներքոյ կարբոյ դաւառին մէջ կայ հայոց Յօհաննու վանքն, ուր կպահպանուի հրաշագործ մասունքը սրբոյն Վեորդայ զօրավարի և այն տեղ ժողովելով բազմաթիւ ուրուկներ, գօթիներ և պէսպէս ցաւօք ախտաժէտներ կառնուեն և կգանեն բժշ կութիւն

85-71891
16891
(1001 / 40505)

իւրեանց հիւանդութեանց բարեխօսութեամբ սրբոյն, ուրեմն ուղարկեցէք և ձեր որդին այնտեղ՝ նա ևս աստուծով կգանէ բժշ կութիւն: Թագաւորն լըսելով այս բանն՝ շատ ուրախացաւ և մեծ պատրաստութիւն տեսնելով՝ որպէսզի շուտով ուղարկէ իւր որդին: Իսկ վրաց թագուհին հակառակելով՝ չկամեցաւ ուղարկել պատճառելով թէ՛ նախ՝ որ թագաւորի որդի է, որոյ գնալովն երկիրն կվրդովի. երկրորդ՝ դա է ինձ միամօր որդի, դուցէ ճանապարհին մահ պատահի դորան և ես զրկուելով որդուցս, մինչև ցմահս աղէխարշ տոչորիմ արտասուօք: Իսկ թագաւորն տարակուսուած՝ չգիտէր թէ ի՞նչ պէտքէ անել ապա բարեք համարեց բերել տալ ի Տփլիս մասունք սրբոյն Վեորդայ: Ուստի պատրաստելով շատ մարդիք՝ զրեց աղաչանաց և միանգամայն սպանալեաց զիր առ կպիսկոպոսն Յօհաննու վանաց և առ իշխանս Վարբոյ, եկող անձինք ցուցին արքունի գիրն որոց հարկն էր, բայց նոքա ըստ ամենայնի զբեկամակ եղին տալ մասունքն սրբոյն: Ըն անձարութեան՝ եկողներն շուտով դեսպան առ թագաւորն ուղարկեցին իմացնելով նոցա ընդգիմութիւնն: Իսկ թագաւորն կժողովէ վրաց ազաներից երկոտասան մանուկներ, զորս և իբրև պատանդ կուղարկէ ի դուռն Յօհաննու վանից, որպէս զի դոցանով վանականք և իշխանք հայոց ապահովուին մասունքն յետոյ վերադարձնելուեն ի վանս: Ըստ կարգադրութեամբ վանականաց՝ թողնելով ի վանս՝ սրբոյն Վե-

որդայ ատամներից և այլ մասունքներից. մնացեալն ամբողջողին ուղարկեցին ի Տփլիս սպասաւորութեամբ երկուց արեղայից, չորս քահանայից ութն աշխարհականաց և ընդ նկին գրեցին առ թաղաւորն զիր սիրոյ և աղաչանաց թէ վերադարձնելու պայմանաւ աչա ուղարկեցան մասունք սրբոյն Վերդայ:

Այլք գնացողներն Հասան ի Տփլիս, ուր և լսելով թագաւորի որդւոյ մահն կամեցան Հանդերձ նշխարօք սրբոյն վերադառնալ ի վանս, բայց վրաց բիրտ և սոպո աղ զն չ'թողին, այլ խտոյն ծանուցին թագաւորին, որ այն ժամանակն կգնուէր ի Աածարէթ որ այժմ ասի Չխար, այն անդ յետոյ շինեցին եկեղեցի ուր և ամբողջեցին մասունքն սրբոյն Վերդայ:

Իսկ թագաւորն դարով ի Տփլիս ոչ միայն չ'վերադարձոյց մասունքն, այլ ընդ հակառակն սկսաւ մեղադրել գնացող պաշտօտեաներն թէ դուք ուշացնելով գործն՝ պատճառ եղաք որդոյս մահուան:

Այսպէս գնացողներն ձեռնունայն վերադառնալով ի վանս՝ պատմեցին այս տխուր անցքն և եղելու թիւնն: Բայց մինչ դեռ վրաց աղաատղնեայք թէ և ի պաղանտի, սակոյն ցայն վայր կինամարկուէին արժանաժայել յարդանօք, այնուհետև իբրև ի վրէժխրնդրութիւն վրաց այդպիսի ամսթաղն խաբէութեան, սկսան նոցա հետ խիտ վարուել, որպէսզի թերևս նոցա ծնողքն բողոքելով առ թագաւորն խնդրեն իւրեանց որդոց վերադարձն և այնպիսեօք գուցէ և նշխարք սրբոյն վերադարձուին ի վանս


սակայն ոչինչ հնար չ'եղև: Այսպէս մասունքն թողին ի վրաստուն և աղաատղնեայք՝ մնացին ի Հայաստան յաշխարհն Արարատեան մինչև ցայսօր ժամանակի: Բայց դոցանից միմիայն երկուքն յետոյ գնացին իւրեանց տշխարհն, մին գնաց Յունաստան. իսկ եօթանքն երկիւղ կրելով, որ երբ վերադառնան իւրեանց Հայրենիքն գուցէ վրաց թագաւորն ի պահանջել հարկին դարձեալ պաղանտ ուղարկէ նաև ի պարսկաստուն, ուր և բռնաբար Հաւատափոխ լինին, ուստի կամաւորապէս որոշեցին մնալ յաշխարհն Արարատեան, զանազան անդեր բռնակուծեան իւրեանց համար ընտրելով: Այլք և մնացին՝ այս են նոցա անուանքն. Թէի՛ որ մնաց ի Յօհաննու վանս, որ այժմ կոչեն թէլինե՛ք. Աղբէկ՛ զրնաց յԱղղուարդ, այժմ կկոչն Աղբէկ՛նք. Սուցաև Ղարօ՛ գնային ի քանաքեռ, այժմ կկոչն Սօծակե՛ք և Ղարօ՛ք, Խաչօ՛ բնակեցաւ ի Սուղնի, (ուրտ պարտապար Բայց անբախ այժն կայ աշտարակ գեղի գերեզմանց: Բայ յը ծանապարհի վայ, որ խաչնց այժն կոչն Բնակե՛ք.) Շարուէ՛ գնաց ի զաղարու վանք, որ և ունեցաւ բարա անուն որդի այժմ կկոչն Բարե՛ք. Ստեփաննոս՛ գնաց ի Բիւրական, ուր և ունեցաւ Բարաջան անուն որդի մի և այժմ կկոչն Բարաջանե՛ք որոյ ազնուատո՛ճ սերուղէն էր Արևանցի Արսէն աղա Բարաջանեան, որոյ և կենդանի որդիք են այժմ, Ասասկ, Սամսոն և Ղազար Բարաջանեանք:

ԻՆՉ ՊԱՏՃԱՌԱԻ ԵՒ ԵՐԲ ՇԻՆԵՑԱԻ ՆԵՐԿԱՅ
ՓԱՌԱԻՈՐ ՎԱՆՔՆ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳԵՈՐԳՆԱՅ:

Երբ վրաց իշխանութիւնն բարձաւ հայաստանի մի մասէն և տիրեցին Սամանցիք, այս մասունքն սրբոյն Վեորդայ՝ որ կմնային Յօհաննու վանաց մէջ և տօնի օրն անթիւ ուխտաւորք կժողովէին, բայց վանքն կառուցած գոլով առ ափն քարաժայռի անդրնդախոր ձորոյ Քասաղ գետոյ, շատ անգամ կպատահէին դժբաղ դութիւնք, որ մանուկ տղաներն անդ գուշաբար կընկնէին դէպի խորածորն և կմահանային, իսկ տիրող այլազգիք այդ պատճառաւ կտուգանէին վանականերն, որպիսի հարստահարութիւնից տաղտկարով վանականաց՝ սահմանեցին, որ ուխտի օրն տանել մասունք սրբոյն ի Վարբի, որպէսզի ազատ մնան ուխտաւորներն այդպիսի յանկարծադէպ պատահարներէ: Բայց այնտեղ ևս անյարմարութիւնք տեսնելով՝ որոշեցին շինել փոքրիկ մատուռ մի ճանապարհի վրայ մօտ Մուղնոյ գեղջ և ուխտի օրն կտանէին այն տեղ սուրբ մասունքն և երբ ուխտաւորք կցրուէին՝ դարձեալ կտանէին Յօհաննու վանքն: Սակայն յետոյ բարւոք համարեցին խպառ թողուլ մասունքն այն նորաշէն մատրան մէջ և նշանակել արեղայ մի սպասաւորիւ անդ իսկ արդիւնքն հասուցանել Յօհաննու վանաց: Այսպէս շարունակուեց շատ տարիներ, մինչև փոխանակ այդ մատրանն կառուցաւ ներկայ փառաւոր վանքն, ուր և

փոխատրեցան ուրուկք և գօթիք, իսկ տարեկան եկամուտն երկու հաւասար բաժին կանէին Յօհաննու և Մուղնոյ վանօրէից վերայ: Որովհետև ամենայն երթևեկաց ծախքերն կհոգայր միմիայն վանքն Մուղնոյ, որից աղաաէր վանքն Յօհաննու, ուստի այսպիսի մշտական տրանջանաց և անբաւականութեան վերջ դնելու համար՝ խորհրդով Վարբոյ իշխանաց սահմանեցին, որ այնուհետև սուրբ Վեորդայ տօնի ուխտի արդեանց կէսն միմիայն տալ Յօհաննու վանից և ոչ այլինչ. և այսպէս կշարունակուէր մինչև սոյն Օսքարիա պատմագրի ժամանակն: Ապա Մուղնեցի Մարտիրոս Եպիսկոպոսն քակելով նախկին մատուռն և փայտեայ դաւիթն շինեց տնտաշ քարերով եկեղեցի և շուրջանակի պարխպ, յետորոյ եղբօր որդի նորա Յովհաննէս վարդապետն հիմնովին քակելով այդ անարուեստ շինուած եկեղեցին, կառոյց ճարտարարհեստակերտութեամբ յանուն սրբոյն Վեորդայ զօրավարի ներկայ հռչակաւոր վանքն, որոյ և արևմտեան դրան առաջին փառաւոր դաւիթ. ըստ հայոց սոմարի ՌՂԺՎ. (1664) ի հայրապետութեան ամենայն հայոց Տեառն Յակոբայ Չուղայեցոյ:

ՅԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՆՑ.



Վ Ա Ն Ք Ս Ր Բ Ա Յ Ն Գ Է Ա Ր Գ Ը Յ Մ ՈՒ Ղ Ն Ի Ա Յ

Հռչակաւոր վանքն սրբոյն Պէորդայ զօրաւարի կառուցած է Մուղնի¹) անուն շինամիջի հարթ հաւասար աեղւոյ վերայ, առ ամին խորածորոյ, որ տեղէն սրննթաց կսահի խօխօջանօք արծաթափայլ թաւազոր կոհակներով դէպի դաշան Արարատեան բարեհամ ջրոյ դեան Քասախ կամ Քարսաղ, որ կպարդեէ առատօրէն համեղ սճաշակ գեղեցիկ ձրկունք: (Գն աեղւոյն է բարեխառն և յոյժ առողջարար: Անքն շրջապատուած է հեռեւեալ պատմական և պատուական լեռներով: Ղէպ հիւսիս արևելք՝ փառահեղ լեռուն Արայի, մերոյս հայկաղեան տոհմի պանծալի և գեղեցիկ նահապետի. որպիսի լեռուն՝ վկայ է ի դարուց և ի ժամանակաց հեռէնորա ողջախոհութեան ի նշաւակ յաւիտենական նախատանաց տարիաւոր թագւոհւոյն Ատրեստանեայց կաթոսնին Շամիրամայ: Ղէպ յարևմուտս՝ լեռուն օրհնութեան և աղօթից սրբոյն Պրիգորի լուսաւորչի և կայանք մերոց մեծաշուք թագաւորաց և իշխանաց մեծապանծն Արաղած: Ղէպ հարաւ ազատարար պատսպարան՝ մարգկային սեռի վիհապանծըն և փառահեղն Արարատ, որ լայնածաւալ հորիզոնական հեռաւորութեան մէջ, դէմ յանդիման ուղ-

1) Սոյն գիւղն հեռի լինելով Յօհաննու վանքէն իսկպէս մղոն մի, այդ պատճառաւ իսկզբան կոչուելէ « Մղնի» բաց յետոյ բնակիչք կոչուելն: Մուղնի:

ղաբերձ կանգնած է իբրև հսկայ անսարստելի որոյ մշտաձիւնապատ շքեղաղարդ պատկառելի գլուխն՝ կարծես թէ՛ ադամանդից փայլք կցողայնէ: Իսկ Արարատեան բարեբեր և արդաւանդ ծառաղարդ այգեստանեօք ընդարձակ դաշտի հրաշալի տեսարանն՝ որ կհանդիպի աչաց, է այնքան զուարճալի և մեծավայելուչ որ անյորդ ոք՝ որքան մանրակրկիտ հետազոտութեամբ կգիտէ զարմանահրաշ, գեղատեսիլ և ընդարձակածաւալ դաշտն, այնքան ի հիացումն կըխորատուղի թէ բնութիւնն որքան առատազէղ զըտնուել է իւր հիասքանչ բարեաց պարգեւօք դէպի օրհնեալ և միշտ բարեբանեալ Արարատեան աշխարհն հայրստանի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԳ ՎԱՆԱՅՆ.

Ս անաց արտաքին տեսքն է խիստ չքնաղակերտ և վայելուչ, գոթական ճարտարապետութեամբ արհեստակերտեալ, խաչաձև, սրածայր, խողովակաձև, փոսորակ և ցողաւոր կաթուղիկէիւ, որ և զարդարուած սեւ և կարմիր սրբատաշ քարերով և քանդակագործ խորհրդաւոր պատկերօք սրբոց և կենդանեաց:

Տաճարս այս հաւասարաչափ կիսոյ բարձրութեանն ունի շրջապատած քարեգօտի և երկու դրունք ի հարաւ և յարևմուտ. որոյ ճակատքն և շրջանակք չ'ըբնաղակերտ յօրինուածովք և շնորհալի ճարտարար-

հեստակերտութեամբ զրուադած են: Արևելեան հարաւային և հիւսիսային ճակատուց իւրաքանչիւր լուսամտից վերայ կան շղթայաձև մանուածոյ և բոլորչի վարդանման քանդակագործ երեք խաչեր. միջակէտին՝ մի հատ մեծ, իսկ կողմնականք՝ երկու փոքրիկք: Տաճարի արևմտեան դրան առաջին հաւասար լայնութեանն՝ նոյնպէս վայելուչ չքնաղակերտութեամբ շինուած է գաւթն, որոյ վերայ կայ սրածայր դեղեցկաշէն կաթուղիկէ, պարարարձուած երկոտասան բոլորչի միապազաղ սեանց վերայ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔՈՒՍՑ Ի ՃԱԿԱՏ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳՐԱՆ.

« Ընդհոյն ասորոյ, եւ Պերսոս վարդապետ որ Ագոլեաց, անյամբ և ժողովրդեամբ իմու ժամերակ եղև շինութեան սորբ Եկեղեցոյս և շինելի զբոսան սրբոյն Գեորգայ Օրբալարի երկնատարակ կամարտ և կանգնելի է վերայ զսորբ խաչ է Բարեխօսութիւն հօր եղբօր իմոյ Տ. Խաչարոյ Արհի Եպիսկոպոսի Գողթան գաւառի և Բեթնասոց վարդապետի, յեկեղէտ է Վրէլարոս, իվ. ՌՆԺԲ. (1669) (ալեւտան) ».

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏՈՒ ՀՈՒՍՄԱՆՅՈՒՆ ԲԱԺՈՒ
Ի ՄԷՔ ԾՈՑԱՆՈՒՄ ՏԵՂԻՈՔ:

« Ընդհոյ պետան ամենայալ է իվ. ՌՆԺԳ. (1664) է Եւգուարոսութեան պարտեց փոքր Եւգուարոսն և է Բանոս-

կա լո-Մեան Երկրիս Աբաղ զո-լէ—խանին և Էհարապետ—
 Մեան Հայոց Տ. Յակոբայ արքայան Աստուհ ինտիս սո-րբ
 Էջմիածնի, որոյ օժանդակո-Մեամբ ին լո-լէ արդեամբ և
 ընդհանոր Իրիստանից արդե-ր ընդ նմին և զամենայն ինչ և
 սրացո-սաթս հոգոյ ինոյ և ճարմոյս վարանիցի, Էս Յովհաննէս
 Վարդապետ Մո-ղեցի որդի Յակոբայ Էղբօր որդի Մար-
 արիտոս Լալիսիպոսի Կախալի հիմանց սո-րբ Պեդրոսայ Էկե-
 ղեցիս և շինեցի զսա հանդերձ գա-Մովս հրաշակերբ յօրինո-ս-
 ծովի, ներսո-սար և արքայո-սար կոթածովի: Ի իվ. ՈՂԺԲ
 (1669) Է Մատա-որո-Մեան պարսից Շահ-սո-լէյմանին
 և Է Բռնակա լո-Մեան Երկրիս Ալեքիզո-լէ—խանին ս-ար-
 օրեցի և Էս ընդ նոսա ս-արքեցայ Է կենցաղոյս և փոխեցայ ս-
 արերն ամենից. ճասց միայն Գ լէի սա լի և ներսին դօշաւէն Է-
 կեղեցոյս և գա-Մեա, զորս կրակա-յանն արարի Էղբօր որդոյ
 ինոյ Վա-նի վարդապետի փոխանորդ լինէ Է ինչ և կարարէ Է
 զպակասո-Մեան Էկեղեցոյս և գա-Մեա, որդ Կեանէ Է զ յիշա-
 րակիս, Եսարո-սաթ որդրի սասցէ Է ինչ և ծնողաց ինոյ. Տեր
 Եսարո-սաթ յեղ որդրօնացի ամէն: Ե լէ Էսան Կարաղալը հո-
 յոց յեղեցէ Է Ի Քրիստոս: 7

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՃԱՆՏՈՒ ՀԻՒՍՈՒԹԵՒՆ ԲԱԺՆԻ
 Ի ԱԶԲԱՐԻ ՎԵՐԵՒՆ.

Սո-րբ Իսաղիլիարայի Շահարապետի Անա Սար-
 կա-սաթի և ծնողացն Յակոբին և Էղբահարին և Էղբարցն
 Մելիսին և Խո-դասարին և ամենայն կենդանեաց և հո-ն-
 Գո-ցէ լոց Է իվ. ՈՂԺԲ (1669) Ե լէ Էսան նօրայ: 7

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԷ ՎԱՆԸՏՆ.

Տաճարս այս կառուցած է ինչպէս արտաբուստ
 նմանապէս և ի ներքուստ կոթածոյ սրբատաշ քարե-
 րից, ունի չորս հատ կամարածիք քառանկիւնաւոր
 սիւներ, որք պարաբարձած են շքեղաշէն փառահեղ
 կաթուղիկէն. որն ունի իւր շրջապատ տրամադծին
 մէջ ու թն հատ յարեւման միմեանց լուսամուտք:

Պէտք յարեւելք՝ միջակիտին շինուած է բեմն, ուր
 կրարձրացուի երեք աստիճան սանդղովք, ունի մի
 սկզբն պատարազի և խորհրդանոց և երկու հաւա-
 սարաչափ մեծութեամբ աւանդատունիւր: Հիւսի-
 սային կողման աւանդատան մէջ ամփոփած են մա-
 սուկը սրբոյն Պէտրոսայ զօրափօրի, որոյ վերայ կայ
 տապանաձև վէմ քար, ուր ամէն աշխարհներէ յըն-
 թացս տարոյն առաւել սրբոյն Պէտրոսայ սօնի օրն
 կյաճախեն անթիւ ու լստաւորք, հիւանդք և ախ-
 տածէտք: Վայ յորմն հիւսիսային աւազան մկրտու-
 թեան: Տաճարի երկարութիւնն՝ բեմի առաջէն ցա-
 րեւմտեան որմն է 23 քայլ. լայնութիւնն՝ հիւսիսէն
 դէպ հարաւ 19 քայլ. իսկ բարձրութիւնն՝ կաթու-
 ղիկէի միջակետից դէպի վայր սարայատակքն եկե-
 ղեցոյ. է 27 կանգուն (սուաց արշին):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՆԵՐՔՈՒՍ ՎԱՐՆԱԿԻՆ
 ԴԱՍՈՒ ԱՌԱՋԻՆ ՍԵՆՆ ՎԵՐԱՑ.

7 Յիշեցէ Է Ի Քրիստոս զպարսն Սարգանն օր է Էղբօր որ-

քի Յովհաննէս Վարդապետի շինողի արքայ եկեղեցոյս և Գա-
 Ռէ և Եղբայր Ղա-նի՛ն Վարդապետի փոխանորդի նոցին, որ է
 հալալ ընկից իւրոյ եւր զխարճն շինութեան այս սեանո
 և Ա. կամարին յիշարակ հոգոյ իւրոյ և շնորհացն հօրն Սա-
 ռապետին և Տօրն Թո-րվանդանն և Եղբայրցն Չատարիայի
 և Մարգարէի և կենակցացն նոցին, զարժից և զաւակաց կեն-
 քանեաց և հանդոցեւոց, որք ողորձի ասէք, Տէր Աստուած
 յեղ ողորձեցի. Գրեցաւ ի թվ. ՌՆԴԻԹ (1670) յետամբ
 (Աջեփանին) :

Աննաց արեւելիան, հարաւային և հիւսիսային
 պարսպաց կից՝ շինուած են կամարակապ քարայարկ
 միանման տասն և մի սենեակներ վանականաց և այլ
 պիտոյից համար շինութիւնք, որք կառուցած են իմի-
 ասին եկեղեցոյ շինութեան հետ. իսկ վերջին ժա-
 մանակաց մէջ շինուած է յատկապէս ուխտաւորաց
 համար միակորզ փայտածածկք հինգ սենեակք, ունի
 մի դուռն պարսպի դէպ հիւսիս, բայց պարսպի պա-
 տերն շատ սեղ քայքայուած են և պարտէզն ոչն-
 չացած է :

ՀԱՐԲ ՎԱՆԱՀԱՐՑ

Մարտիրոս Եպիսկոպոս Մուղնեցի այր բա-
 րերարոյ և բարեգործ, նախկին հիմնադիր ոչ
 ներկայ փառահեղ տաճարի վանացս, այլ ան-
 տաշ բարերով շինած եկեղեցոյն, ուր ժամա-
 նակաւորապէս կպահէին մասունք սրբոյն Գէ-
 որգայ. սա շրջապատեց նաև բարաշէն պարիսպ
 վանացն :

Յմուտ
 Նախկին
 Վարժարան
 Մ. Մ.
 1651

Յովհաննէս Վարդապետ Մուղնեցի, եղբօր
 որդի վերոյիշեալ Մարտիրոս Եպիսկոպոսի, էր
 զաւակ մեծատան և այր մեծագործ, բարեւէր և
 ամենայն առաքինական գործովք փայլեալ. Սա՛
 յաւուրս հայրապետութեան ամենայն Հայոց
 Տեառն Յակովբայ Սրբազան Վաթուղիկոսի ջու-
 ղայեցոյ, հիմնովին քակելով նախկին անար-
 ուեստ և անտաշ բարերով շինուած եկեղեցին,
 ի նորոյ կառոյց ամենաշքեղ ճարտարարհես-
 տակերտութեամբ ներկայ փառաւոր վանքն
 յանուն սրբոյն Գէորգայ զօրավարի, որոյ ա-
 րևմտեան դրան առաջին նաև վայելուչ գա-
 ՚ւիթ. իսկ արեւելեան հարաւային և հիւսիսային
 պարսպաց կից կամարակապ քարայարկ սեն-
 եակներ և այլ պիտոյից համար շինուածքներ :
 Այս երանելի անձն՝ սոյն վանաց կառուցման
 վերայ՝ հայագն ժողովրդոց առատաձեռն բարե-
 պաշտական նուէրների հետ ծախեց նոս իւր
 սեփհական գոյքն և ստացուածքն : Վանուց շի-
 նութիւնն սկսուել է ըստ տուժարին հայոց
 ՌճԺԳ (1664) և աւարտուել է ՌճԺԸ (1669) :

ՌճԺԳ.
 1664

Վաւելթ վարդապետ Մուղնեցի. եղբոր որդի վերոյիշեալ Յովհաննէս վարդապետի հիմնադրի վանացս, սա ևս համանման էր իւր հօրեղբօրն կենօք և գործով ք բարութեան, երբ փոխանորդեց նորան՝ իսկոյն ձեռք զարկեց լրացնել տաճարի շինութեան թերութիւնքն (ինչպէս կտակաւ յաճնել էր հօրեղբայրն) այն է, տանեաց և եկեղեցւոյ միջինաւ գաւթի սալայատակութիւնքն, օժանդակ և աջակից ունելով ինքեան այս աստուածահաճոյ գործոյ մէջ իւր հարազատ եղբայր պարոն Վարդանն, որոյ բարի անունն կյիշատակի տաճարի հարաւային դասու առաջին սեան արձանագրութեան մէջ:

ՌՃԹԹ
1670

Գրիգոր վարդապետ Մուղնեցի, այր աշխատասէր և վանուցս բարեկարգ պայծառութեան հոգատար, սա գնեաց երկու խոտատեղիք Քասախ գետոյ ձորամիջի Սարգսի որդի Յովհաննիսէն, որոյ հայերէն կալուածագիրն՝ ըստ պատմելոյ Սիմէօն Վաթուղիկոսի Երևանցւոյ ի Զամբըս մատենի յերես 292. գտանի ի սուրբ էջմիածին:

ՌՃԽԲ
1693

Վղէքսանդր վարդապետ, այր վատաշուէր. սա՝ ծածուկ Յակովբ Վաթուղիկոսէն Շամախեցւոյ, Մուղնի գիւղն ամբողջովին տուելէր իբրև կաշառ (որպէսպի պաշտպանութիւն գտնէ) Երևանայ տիրող Հիւսէինայի—խանի նաղիր (ոստիկան) Իբրահիմ աղային, որ տիրելէր այդ գիւղին մինչև յ ՌՄԺԻ: (1768) թիւն, ապա բազմաշխատ ջանիւր Սիմէօն բաղմերախտ Վաթուղիկոսի Երևանցւոյ, Պարսից շարխաթի դա-

տաստանաւ յետս ստացուելով կմնայ դարձեալ ՌՄԹ: ի տիրապետութիւն վանաց սրբոյն Գէորդայ: 1760

Մարկոս վարդապետ Շուխեանց Աշտարակեցի, այր տնտես և աշխատասէր, երբ 1827 թ. տիրապետողն Երևանայ Հիւսէին խան—սարգարն՝ Ռուս և պարսկական պատերազմի պատճառաւ, Արարատեան նահանգի ժողովուրդն տարաւ դէպի Ալաշկերտու և Իււքրիւիտու գաւառներն, սա ևս վերադառնելով սուրբ Գէորդայ մասունքն և այլ սրբազան անօթեղէնք եկեղեցւոյն՝ Աշտարակայ ժողովրդոց հետ իմաստին վտարանդեցաւ, ուր մնացին վեց և կէս ամիս մինչև խաղաղեցաւ երկիրն Արարատեան, ամ մննքն իմաստին վերադարձան իւրեանց նախկին բնակավայրերն և վարդապետս այս ի վանս Մուղնեոյ:

1827

Ստեփաննոս Արք Եպիսկոպոս Թէլաւեցի (ըստ ոմանց իզմիրցի) այր զիտնական և աշխատասէր. սա հիմնովին վերանորոգեց եկեղեցւոյ տանեաց խախտուած և փշրուած սալքարերն:

1830

Մարտիրոս Արք Եպիսկոպոս Աեսարացի, տեղապահ Եփրեմայ երանաշնարհ Վաթուղիկոսի, սա ևս վերանորոգել է խախտուած և քայքայուած սենեակներն և պարիսպ վանայն:

1834

Մարտիրոս վարդապետ Էլ լիկեանց Աշտարակեցի, վանուց տնտեսական բարեկարգութեան համար միշտ հոգատար անձն է եղել:

1836

Գրիգոր վարդապետ Ամիրեանց Աշտարակե-
զի, այր դանդաղ և անգործ: 1838

Ներսէս վարդապետ Վանեցի, չէ ունեցել
ոչինչ յիշատակութեան արժանի գործ: 1840

Խաչատուր Եպիսկոպոս Աշտարակեցի, սա՛
Նոր ջուղայի և Հնդկաստանի հայոց առաջնոր-
դութենէն հրաժարուելով՝ կվերագառնայ ի ս.
էջմիածին և իրրև ծերունի գառամեալ անձն
կամելով գտնել հանգիստ, կընդունէ վանա-
հայրութիւնն Մուղնոյ վանաց, բայց շուտով
կկնքէ իւր մահկանացու կեանքն պատահապէս
ի սուրբ էջմիածին: 1843

Սիմէօն վարդապետ Փարաբարցի, սա ևս վա-
նաց բարեկարգ տնտեսականութեան համար
հետեող է եղել: 1845

Նիկողայոս շուշտակ վարդապետ Սուրմա-
լուեցի Եվջիլար գեղջէ. չէ ունեցել յօգուտ
վանաց գործ ինչ աշխատութեան: 1848

Մարտիրոս վարդապետ Մժէժեան Աարնեցի,
էր այր տեղեակ գրոց. սա սկիզբն եղաւ բացող
դպրոցի վանացս մէջ, ուր ժողովելով շրջակայ
գիւղերէն բաւական թուով մանուկներ՝ կդաս-
տիարակէր ըստ չափու կարեացն: Բայց երբ
Աշտարակեցի Ներսէս Ե. Սրբալնակատար Ա-
թուղիկոսի ժամանակն շատ նշանուոր վանա-
կաներ փախուստ կտային դէպի տաճկաստուն,
սա ևս թողնելով վանքն Մուղնոյ, գաղտնի ան-
ցաւ թուրքաց սահմանն դէպի իւր հայրենիքն: 1849

Յակովբ վարդապետ Քեանդարեանց Շիրակե-
ցի Ալէքսանդրապօլ բաղաբէ, շուշտակ, այր բա-
րերարոյ և հիւրասէր. սորա վանահայրութեան
ժամանակին՝ վանքային տնտեսական վիճակն
կգտնուէր բաւական պայծառ դրութեան մէջ: 1852

Ներսէս վարդապետ կօլօտ կոչեցեալ Շիրա-
կացի ի ճլղլար գեղջէ, այր զձուձ և անգործ,
ուստի և անօգտակար պաշտօնին: 1855

Յակովբ վարդապետ Քեանդարեան (կրկին) 1857
անգամ:

Մեսրոպ *) վարդապետ Սմբատեանց Նօր-
սեցի ի հին Նախիջևան գաւառէ, սորա վանա-
հայրութեան միջոցին՝ շինեցաւ այժմեան խար-
եօւլ բնակարանն վանահարց, ծախիւր սրբոյ
Աթոռոյն Էջմիածնի: 1859

Յովհաննէս վարդապետ Տ. Յարութիւնեան
Տաթևացի, այր տնտես և աշխատասէր, ուստի
և վանքային բարեկարգութեան պիտանացու,
բայց տեղոյն գիւղականաց հետ՝ վանքային
հողոց յափշտակութեան և վէճի պատճառաւ
չհաշտուելով՝ շուտով հեռացաւ պաշտօնէն: 1862

Յովակիմ *) վարդապետ Տ. Գրիգորեանց Ե-
րևանցի, շուշտակ, իսկզբան բահանայ գնչու
(բօշայ) ժողովրդականաց երևանայ, էր այր
անօգտակար պաշտօնին: 1863

*) Ոոցա լիպատուճ կենսագրութիւնքն կկարդացուին
յինէն գրեալ « վարդապետութեան » մատենի մէջ:

Թաղէոս վարդապետ Տէր Գանիէլեան Արցախեցի, եղբայրասէր և աննենդ անձն իբրև այր Խորայեւացի, իսկ վանաց բարեկարգ տընտեսականութեանն հոգատար : 1865

Մեսրոփը վարդապետ Սմբատեանց Նորսեցի (կրկին անգամ) : 1866

Գէորգ վարդապետ Մովսէսեանց Երևանցի, շուշտակ, էր անձն խոժոռադէմ դձուձ և անգործ, ուստի անօգտակար պաշտօնին : 1867

Ռափայէլ վարդապետ Տէր Տիմոթէոսեան Հիրակացի յԱրթիկ գեղջէ, շուշտակ, այր բարեմիտ և հոգատար վանաց պայծառութեան : Սա ժողովարարութեամբ շինեց տաճարի խախտեալ տեղերն և իսպառ վերանորոգեց տանեաց հարաւային կողման սալքն : 1868

Գրիգոր վարդապետ Գայլակերեան Վաղարշապատցի, սորա վանահայրական պաշտօնն ամսօրեայ լինելու պատճառաւ, չունեցաւ ոչինչ գործ վանաց մէջ : 1869

Թաղէոս վարդապետ Տ. Գանիէլեան Արցախեցի (կրկին անգամ) : 1870

Մկրտիչ վարդապետ Հասնազարեան Վաղարշապատցի. սորա կեանքն և գործքն էին ըստ ամենայնի տժգոյն և միանգամայն գայթակղական : 1871

Ռափայէլ վարդապետ Տ. Տիմոթէոսեան Արթիկեցի (կրկին անգամ) : 1872

Արէլ Արք Եպիսկոպոս Միթիթարեան Վաղարշապատցի, այր գիտնական պատմաբան և վկայասան, ունի բաւական թուով տպագրեալ և անտիպ գովելի երկասիրութիւնք. վանահայրական պաշտօնին բոլորովին անփոյթ էր, բայց փոյթեալ միմիայն իւր գրաւոր աշխատութեանց : 1873

Ղուկաս վարդապետ Հատուորեան Վաղարշապատցի. չունեցաւ ոչինչ օգտակար գործ վանաց մէջ : 1876

Պետրոս վարդապետ Այվազեան Ախալցխացի. շուշտակ, չունեցաւ ոչինչ օգտակար գործ վանաց մէջ : 1878

Արրահամ վարդապետ Նորջուղայեցի Ասպահանց. սորա վանահայրական պաշտօնն իւր կարճատե կենաց հետ իմիասին մահուամբ կընքեցաւ : 1880

Մկրտիչ վարդապետ Հասնազարեան Վաղարշապատցի. սա՛ կրկին անգամ վանահայրութեան ժամանակն ժողովարարութեամբ շինեց փայտածածկը միակարգ հինգ սենեակը կից պարսպի հարաւային կողման : 1881

Եղիշէ վարդապետ Ամատունի Հիրակ գաւառէ Ալէքսանդրապօլցի. այր բանխմաց, բարե-

սիրտ և եղբայրասէր և ըստ կարելոյն միշտ
օժանդակ թշուառաց նաև վանաց բարեկարգ
տնտեսականութեանն հոգատար : 1883

Պետրոս վարդապետ Այվազեան Ախալցխա-
ցի . (կրկին անգամ) : 1886

Ղուկաս Աբեղայ Գեորգալուեցի որ ի Վաղար-
շապատ գաւառի . այր աշխատասէր և վանաց
բարեզարդութեան հոգատար : 1888

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Եթէ յառաջ քան 1827 թուականն՝ վանահայրց
շարակարգութիւնն երբեմնապէս ընդհատուած կը-
նկատուի և այն բաւական երկար տարիներ, պատ-
ճառն երկու կերպ պէտքէ հասկանալ . Նախ՝ որ ա-
նօրէն տիրապետողաց բռնակալութեան և բարբա-
րոս ելուզակաց մշտաշարունակ ասպատակութեանց
պատճառաւ, վանօրեայք երկար տարիներ կմայա-
նային քնակութիւնից : Արկարդ՝ հետախուզու-
թեամբս որքան հնարաւոր եղաւ ինձ գտնել թէ ար-
ձանագրութեանց և թէ պատմական տեղեկութեանց
մէջ անուանք՝ վանահայրց, այնքան ևս նշանակեցի :

Իսկ յետ այնորիկ վանահայրց կարճ ժամանակայ
պաշտօնավարութեանց տարեթիւն և մերթ ընդ
մերթ մի զկնի միոյ փոփոխելն տեսնող և կարգացող

անձն դիւրեաւ կհասկանայ գործոյ եղելութիւնն, որ
նորա եղել են թէև վանահայրներ, սակայն՝ չեն թո-
ղել նոցա լինել իրապէս տէր պաշտօնի այլ իբրև
ժամանակաւոր զրեթէ անցորդական հիւրեր երթե-
կիկին : Նամանաւանդ երբ հոգևոր իշխանութիւնն
սովորաբար ամենայն տարի կտանի ի սուրբ Լջմիա-
ծին ինչպէս բարեպաշտ ուխտաւորներէ գոյացեալ
խաչահամբոյր արգիւնքն և յանուն տաճարի նուէ-
րած անգամ յիշատակիք, նմանապէս տարեկան բեր-
քըն և հասոյթն Սուղնի զիւզի, մինչ զեռ առա-
ջին ժամանակներն այդ ամէնն կմնային յօրուտ և ի
բարեզարդութիւն վանացս : Իսկ ի ներկայս՝ ի ցաւ
սրտից ամենից՝ տաճարն աստուծոյ է անշուք և զուրկ
ըստ ամենայնի անգամ իւրեան պատշաճաւոր զար-
դերից և ոչ նման է գէթ զիւզական վերջին աղ քատ
եկեղեցւոյ : Ուստի այդ իսկ ցաւալի պատռառաւ՝
վանքային տնտեսական կառավարութիւնն կգտնուի
ողորմելի, թշուառ և աղ քատ վիճակի մէջ : Տեսնենք,
արդեօք հոգևոր իշխանութիւնն կարեկցաբար բարե-
փոխելու է վանացս այս տխուր վիճակն, թէ իւր սո-
վորականն շարունակելու է և այսուհետև :

ՄԵՍՈՒՆԻՔ ՍՐԲՈՑ

Աջ սրբոյն Ղէորգայ զօրավարի, արծաթապատ և
ոսկեզօծ : որոյ վերայ այսպիսի հատկուոր յիշատա-
կագիր . « ասորք արջ յեղատակէ Յահաննէան լեղեցի տե-
Թաւրոսին ի՞՞՞ Ժուր և սրբի, իւրն նորա որբնեբոս, այս է Ս .

ալ Վերագայ գ ինոորն որ վերեցս անգամ յարեաւ ի Ֆեւե-
լոց աւ քոյնարս կամ ալ. իվ. Ո՛ՉԳ. (1634):»

Պաշարան մեծ՝ արծաթի, քառակուսի մի երեսի
վերայ երկփեղ կ գրուեք, որոյ մէջ ամփոփած են մա-
սունք սրբոյն Վեորդայ և մասն կենաց փայտէն, ճը-
կուան սրբոյն թաղէոսի առաքելոյ և մասունք սրբոց
Խարիթեանց և Ս առվառեայ կուսի. որոյ միւս երե-
սի վերայ կայ այսպիսի յիշատակագիր. « Շնորհոք
ամենակ ՚ն Աստուծոյ, ևս Մոռնեցի Մառնի վարդապետ
արեան զպահարանս խախտեալ և քայտայեալ վերային նորո-
գեցի և երբ ի սորք Վերագայ մասն վերայ կենաց փայտն,
Թարեոս առաքելոյ ճկոտն, Խարիթեանց մասն և սրբոյն
Ս առվառեայ կոտն մասն, յեղարան ինչ և շնորոց ինոց,
այլ և յեղեցեք վարդապետի եղբօր կնն շնեփոնէն, վարդապ
Նւթասանի կնն շեղնայն զսոկելոքն ին յեղարան հոգոց
իւրեանց իվ. Ո՛ՂԴԳ. (1684):»

Պազաթ սրբոյ աւետարանչին Մատթեոսի ագու-
ցած գաղաթաձև արծաթի պաշարանի մէջ, և գրու-
ած է դմբէթաւոր կաթուղիկեաձև արծաթի չիւթիչի
մեծ կրկին պաշարանի մէջ, կայ յիշատակագիր միայն
գաղաթաձև պաշարանի վերայ այսպէս « Սորք գա-
գալս Մարթեոսի սորք Աւետարանչին և յեղարան քանա-
թեոցի պարան Պրանգոն ՚ն իվ. Ո՛ՂՇԲ. (1729):»

Աւետարան գրչեայ ի վերայ Ռամբակեայ թղթոյ,

գրեալ ընդ հովանեաւ առաքելոց. վանս թուոցաւ ի
գաւառին Աւրնկա ձեռամբ Յակոբ կրօնաւորի, թ՝
Չ՛ (1321) արդեամբ Սիմէօն Վահանայի:

Աւետարան նոյնպիսի, գրեալ ձեռամբ սուտ ա-
նուն քահանայի թ՝ ՉՎԳ. (1351) ի գիւղն Արա-
րատեանց կոչեցեալ:

ԿԱԼՈՒԱԾԻ ՎԱՆԱՅՆ.

Ըստ հայոց տումարի ՊՊԻՆ (1433). Պրիգոր
բաղմերախա Սաթուղիկոնն Մակուեցի, որդի Պա-
րոն Չալալ բէկի, վերստին գնելով յանուն Աթուոյ
սրբոյ Լճմիածնի, Ամիր — Ոռուստամ տաճիկէն հաս-
տատուն կալուածագրով եօթն զիւղորայքս, Ա-
ղարշապատ, Աշտարակ, Ռաթոնիչ, Նորարաւիթ,
Աղանատուն, Քիրաչլու ի թիւս որոց և գիւղն
Մուղնի, որոց ամենից արդիւնքն մշտապէս կտա-
նայր Աթոնն Լճմիածնի, բայց յաւուրս Տ. Փիլիպ-
պոսի մեծագործ հայրապետի երբ սկսան շատ վանօ-
րայք և եկեղեցիք նորոգել և բաղմանալ և վանքն սր-
բոյ Վեորդայ՝ որ նոր ձեռնարկուած էր կառուցանել,
Արբաղնակատար հայրապետն՝ Մուղնի գիւղն ամ-
բողջովին կ յատկացնէ ի սեփհականութիւն այսր նո-
րակառոյց վանաց, որում և կտիրէ մինչև ցայսօր, ո-
րոյ և սահմանքն հետեւեալ քն են: Տարաւային կող-
մանէ վանացս՝ է Աշտարակ գիւղի գերեզմանատունն,
դէպ արեմուտք՝ Փարբի գիւղի ձանապարհն, որտե-
ղէն դառնալով ուղ զազնաց դէպ հիւսիս՝ Քիւչիւք-

քանդ զիւղի եղն. մինչև Պարբի զիւղի անդէոյ
ճանապարհն ապա դառնալով դէպ հիւսիս արեւի . ք
և անցնելով խորածորն Վասաղ գետոյ կբարձրանայ
դէպ ոստին վարելահողերն մինչև արքունի ճանա-
պարհն, որտեղէն ուղ զակի կգիմէ դէպ հարաւ Աշ-
տարակ զիւղի շրէշապատ սահմանն, ապա դառնալով
դէպ արեւմուտք կիջնի Վասաղ գետն և բարձրանա-
լով ձորն՝ դարձեալ կմիանայ Աշտարակայ գերեզմա-
նոցի հետ: Իսկ ձորամիջի սահմանն կբաժանի վանացս
անտառ անուանեալ ծառատնկովն, ուր և կայ վէմ-
քար գերեզմանի Մկրտում անուն նշանաւոր անձի
Աշտարակեցոյ այսպիսի արձանագրութեամբ:

” Ով հանդիպող է այս շերտի .
չյեղ աղաչեմ քո՛ւ ողորմի,
է՛մ անո՛նս մըքո՛ւմ կուլի .
տեղեւս քո՛ւ Աղբարակի,
է յերկիւղէ այլասերի .
վաղճանեցայ այս՛մ տեղի:
Ըվ. ՈՒՄԻՉ. (1777) ”

Ա անքն ի սկզբան ունեցելէ: (այժմ ուլ)
ի Փարաքար՝ այգի մի,
ի Մուղնի՝ երկու ջրաղաց,
Ա անքն այժմ ունի,

Աշտարակ զիւղումն երկու փոքրիկ այգիք, մին՝
կկոչի ծառուրի և միւսն՝ անտեսի:

Մուղնի զիւղումն Վասաղ գետոյ ձորամիջին
անտառ անուանեալ ծառատունկ և խոտատեղի:

1m 504

1003

004 X 444

1005

« Ազգային գրադարան



NL0027744

